

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Լոռու մարզի հողային ֆոնդում 2012թ. հուլիսի 1-ից մինչև 2013թ. հուլիսի 1-ը կատարված ընթացիկ փոփոխությունների վերաբերյալ

Գյուղատնտեսական նշանակության հողերը պակասել են 0.911 հեկտարով, որից 0.2 հա փոխադրվել է բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 0.485 հա էներգետիկայի, կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի, նպատակային նշանակության, էներգետիկայի հողերի գործառնական նշանակության՝ ՓՀԵԿ-երի և օժանդակ կառույցների կառուցման նպատակով, 0.226 հա հատուկ պահպանվող հողերի նպատակային նշանակության, հանգստի գոտու կառուցման նպատակով: ՀՀ համայնքների ավագանիների որոշումները և սեփականության իրավունքի գրանցման վկայականները կցվում են:

Քաղաքացիների սեփականության հողերը ավելացել են 10.699 հեկտարով, համայնքային սեփականության հողերի օտարումներից, որից գյուղատնտեսական՝ 5.548 հա, բնակավայրերի՝ 4.52 հա, արդյուն. և այլ արտ. նշ.՝ 0.616 հա: Քաղաքացիների սեփականության հողերը միաժամանակ պակասել են 32.91 հեկտարով, ՀՀ Հողային օրենսգրքի 101 հոդվածի համաձայն՝ անցել են համայնքային սեփականություն հանդիսացող հողերի կազմը՝ որից վարելահող՝ 13.47 հա, խոտհարք՝ 19.34 հա, տնամերձ 0.1 հա: Այսպիսով, քաղաքացիների սեփականության հողերը 2012թ. համեմատ պակասել են 22.211 հեկտարով և կազմում են ընդամենը 56264.689 հա:

Իրավաբանական անձանց սեփականության հողերը 2012թ. համեմատ ավելացել են 0.75 հեկտարով, համայնքային սեփականության գյուղատնտեսական, հասարակական և արտադրական հողերի օտարումների /աճուրդների, ուղղակի վաճառքների և օրենքի ուժով սեփականության իրավունքի ճանաչման/ հաշվին: Իրավաբանական անձանց սեփականության հողերը այժմ կազմում են ընդամենը 4387.3 հա:

Համայնքային սեփականության հողերը ավելացել են 1.05 հեկտարով, պետական սեփականության հողերի հաշվին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Համայնքային սեփականության հողերը միաժամանակ պակասել են 61.74 հեկտարով աճուրդների, ուղղակի վաճառքների և օրենքի ուժով սեփականության իրավունքի ճանաչման: Այսպիսով, համայնքային սեփականության հողերը այժմ կազմում են 128665.961 հեկտար:

Պետական սեփականության հողերը մնացել են անփոփոխ և կազմում են 190528.4 հա:

Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից հաշվետու ժամանակաշրջանում օգտագործման իրավունքով տրամադրվել է 4483,4 հա, այդ թվում գյուղատնտեսական գործունեության նպատակով՝ 4478.3 հա, որից վարելահող՝ 231.86 հա, խոտհարք՝ 190.2 հա, արոտ՝ 4055.7 հա, այլ հողատեսք՝ 0.6 հա: Կառուցապատման իրավունքով 5.1 հա, որից բնակավայրերի հողերից 1.64 հա, արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշ. հողերից՝ 3.466 հա:

Պետական սեփականություն հանդիսացող հողերից օգտագործման իրավունքով տրամադրվել է 257.82 հա, այդ թվում գյուղատնտեսական գործունեության նպատակով՝ 39.6 հա, որից խոտհարք՝ 32.3 հա, արոտ՝ 7.3 հա, որը ճշտումների միջոցով տեղափոխվել է պետ սեփ. խոտհարքից:

Մարզում ռոզվող հողերը 2012թ. համեմատ փոփոխություններ չեն կրել: